



**ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

ԱՆՆԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

20 հունիսի 2012թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի

Մ. Թովուզյանի

Քննության առնելով «Ն.Ա.Թ.Ա.Կ.» ՍՊԸ-ի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Նամաձայն ՆՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Ն.Ա.Թ.Ա.Կ.» ՍՊԸ-ն 2012թ. հունիսի 1-ին դիմել է ՆՏ սահմանադրական դատարան՝ խնդրելով «Պարզեցված հարկի մասին» ՆՕ-61 ՆՏ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետը եւ դրա հետ փոխկապակցված՝ օրենքի 16-րդ հոդվածի 3.1-րդ մասը ճանաչել ՆՏ Սահմանադրության 45-րդ հոդվածի, 83-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին հակասող եւ անվավեր»:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ՝

1. Դիմողի կարծիքով՝ օրենքը չի նախատեսում հարկ վճարողի գործողություններն այն դեպքերում, երբ վերջինս բացահայտել է, որ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանաչափի վերաբերյալ պայմանը չի բավարարում իր կողմից հայտարարագիրը ներկայացնելու համար, եւ հայտարարագրի ներկայացումը եղել է սխալ: Նշյալ պայմանների օրենսդրորեն չնախատեսումը, որի պայմաններում ենթադրվում է անխուսափելիորեն օրենքի

16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետով փուզանքի կիրառում, ակնհայտորեն հանգեցնում է հանրային եւ մասնավոր շահերի հավասարակշռվածության ապահովման եւ հարկ վճարողների իրավունքների եւ օրինական շահերի երաշխավորման սահմանադրաիրավական պահանջների խախտման:

2. Նշված դրույթների առնչությամբ դիմողը վերջիններիս հակասահմանադրականությունը փորձում է հիմնավորել՝ ենթադրյալ օրենսդրական բացը մաքնանշելով:

Օրենսդրական բացը՝ որպես իրավունքի բացի փարպետակ, իրավական կարգավորման ոլորտում գրավող փաստական հանգամանքների նկատմամբ կոնկրետ նորմարիվ պարվիրանի բացակայությունն է: ՏՏ սահմանադրական դատարանն իր՝ 2010թ. փետրվարի 5-ի ՄԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի եւ օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է, որ իրավունքի բացը հաղթահարելու գործում օրենսդիր մարմնի եւ սահմանադրական դատարանի իրավասությունները դիպարկելով իշխանությունների փարանջափման սկզբունքի համարեքստում, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գրավող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմարիվ պարվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է փվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք: Զարգացնելով իր վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՄԴՈ-914 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապարասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը:

Տվյալ դեպքում դիմողի հիմնական փաստարկներն ուղղված են նրան, որ օրենքը չի նախատեսում հարկ վճարողի գործողություններն այն դեպքերում, երբ վերջինս բացահայտել է, որ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանաչափի վերաբերյալ պայմանը չի բավարարում իր կողմից հայտարարագիրը ներկայացնելու համար, եւ հայտարարագրի ներկայացումը եղել է սխալ: Այս համարեքստում, ՏՏ վերաքննիչ դատարանն արձա-

նագրել է, որ «...Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի համաձայն՝ պարզեցված հարկ վճարողները սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսվող հայրարարագրի մեջ սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվող սահմանաչափի վերաբերյալ ոչ ճիշտ փեղեկություններ ներառելու դեպքում վճարում են փուզանք: Նշված իրավանորմի համաձայն՝ փուզանք է առաջանում այն դեպքում, երբ պարզեցված հարկ վճարողները իրենց հաշվառման հարկային մարմին ներկայացված հայրարարագրի մեջ ոչ ճիշտ փեղեկություններ են ներառում նախորդ փարվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեության բոլոր փասակների մասով մարակարարված ապրանքների եւ մարուցված ծառայությունների իրացման շրջանառության ընդհանուր գումարի վերաբերյալ: Այսինքն, Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետով նախատեսված իրավախախտումը ավարտված է համարվում, այլ կերպ ասած՝ առկա է, երբ հարկային փեսչություն ներկայացվել է հայրարարագիր, որպեսզի նշված են ոչ ճիշտ փեղեկություններ»: Նշյալ իրավական դիրքորոշումները հաստատվել են նաև ՏՏ վճարեկ դափարանի կողմից:

Վերոշարադրյալը վկայում է, որ նշյալ հիմնախնդրի վերաբերյալ ձեւավորվել է միասնական իրավակիրառական պրակտիկա, եւ եթե առկա էլ է օրենսդրական բաց, ապա այն լրացնելու մենաշնորհը, ելնելով սահմանադրական դափարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումներից եւ վերոշարադրյալից, պարկանում է օրենսդիր մարմնին:

3. Դիմումի ընդհանուր փրամաբանությունը վկայում է, որ կոնկրետ փվյալ դեպքում դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրա նկարամար կայացված համապարասխան դափարան ակտի արդյունք են, այսինքն՝ խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթների հակասահմանադրականության վիճարկմամբ:

Նամաձայն ՏՏ սահմանադրական դափարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշման մեջ արփահայփած իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դափարանի մասին» ՏՏ օրենքի 32 հոդվածի 1-ին մասի հիմքով՝ որպես սահմանադրական դափարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Այսինքն՝ առկա է անհարական դիմումի հիման վրա գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դափարանի մասին» ՏՏ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

«Հ.Ա.Թ.Ա.Կ.» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող

Անդամներ՝



20 հունիսի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/2-12